

Ալինեմ Ա ի կառավարութիւնը սկսեց արմատախիլ անել նախորդի կառավարութեան սպին: Այնպէս էր թւում, թէ պէտք է հատուցուի այն բոլոր անարդանքների համար, որ հասել էին կղերականներին և բարեպաշտօն մարդկանց: գահի վրայ բազմած ծաղրածուից: <sup>1)</sup>

(Նարունակելի)

### ՇԻՐԱԿԻ ԴԻՀՂԱԿԱՆ ԿԵՍՆՔԻՑ

Երկր. Ղանիմաները.—Գիւղերի դիրքը.—Տների եւ փողոցների անյարմարութիւնը.—Տների ազդեցութիւնը բնակիչների վրայ.—Բնակիչները. Նրանց բարքեր.—Հողի բանակութիւնը.—Պարաւացնելու պէտքը.—Անասունների բիւր.—Ժանախախիսից կոտորուածները.—Գիւղական ծախսները.—Վերին Ղանիմայի եկեղեցին.—Գիւղի բանանան եւ նրա արդիւնքները.—Ո՞վ եր Տեղիան.—Ներքին Ղանիմայի վաները.—Հոգաբարձութիւնը եւ նրա գործունեութիւնը.—Հին ձեռագրեր.—Բնելեռագիր առձանագրութիւնը:

### 1.

Ղանլիճա գիւղերը երկուս են և պատկանում են ըստ քաղաքականի և ըստ հոգեւոր վարչութեան Օրթաքիլիսու հասարակութեան և գործակալութեան: Ղանլիճանները գանեւում են քաղաքից 7 մերսու հեռու, գէպի հիւսիս-արևեմսուտք, Արփա-չայի ձորում: Նրանցից մէկը մեծ է և իւր տեղագրութեան պատճառով կոչւում է Վերին Ղանլիճա, իսկ միւսը փոքը է և կոչւում է Ներքին Ղանլիճա: Վերին Ղանլիճան տարածուած է Արփա-չայի ձորն իջնող գարաւանգների վրայ, Ներքին Ղանլիճան զետեղուած է գետի ափին մօտ: Երկու Ղանլիճաններն իրարից հեռու են մի քանի ոաժէնով և բաժանուած են մի փոքը եկ առուակով: Առուակի ջրերը կազմւում են քարավիններից գուրը ծորուող աղբերակներից: Ջրերը քարերի միջից գուրու դալու պատճառով, զերծ են աղային խառնութեղներից, որով և բարե-

1) Քրիդրիս մեծ.

համ են, մաքուր ու սառնորակ: Նրանք հեռու կամ մօտիլ իրար հետ միանալով՝ քարերի միջեց ցած թափուելով, քաղցր կարկաչիւնով, գնում խառնում են Արփա-շայի ջրերին:

Գիւղերի արտաքին տեսքը ոչնչով չի տարբերում նիրակի միւս գիւղերից: Այս տեղերում էլ երևում է նոյն մերկութիւնը, նոյն խեղճաւթիւնը: Նրանք ընդհանրապէս զուրկ են դալարից Մի քանի ուռենիներ միայն աճել են առուակի ափերում, որով խանգարում են գիւղերի միապաղազ մերկութիւնը: Նրանց թերին լրացնում են աթարի բարձր, մինարի նման բուրգերը: Կարունքին ապաստաժ քարերը, կամ նրանց ծմակները ծածկում են ըաց-կանաչ մամուռով կամ բարակ սէպով ու երփներանգ ծաղիկներով, որով գրաւել տեսք են տալիս շվջակայքին, իսկ աշունքին, ընդհակառակը, դեղնում է այդ թաւշանման կանաչը և մի տեսակ մեռելային կերպարանք տալիս առանց այն էլ բուսականութիւնից զուրկ, ժլատ ընութեանը:

Երկու Ղանլիճաններումն էլ անեքը գեանափոր են կամ կիսով չափ ծածկուած են հողի մէջ: Նրանց պատերը շինուած են մանր անձեռ քարերից և այնքան բարձր են, որ երկրաշարժի գորեղ ցնցում կամ դարնան մի քանի օր տեսդ անձը կի խոնաւութիւն, հեշտութեամբ կարող են վայր թափուել: Տները շինուած են խառնիխուռան, մէկը միւսի վրայ: Առանձին ճանապարհներ չկան, անցուգարձը կատարում է երգիքների վրայով: Շատ անգամ է պատահում, կենդանին կամ մարդը երդիքով գնալիս, կտուրը փուլ է եկել և նրանք ներս են թափուել: Պէտք է երեակայել այդ միջոցին տան մէջ եղաղների զրութիւնն ու վախը: Փողոց ասած բանը մեր հայ գիւղացու հասկացողութեան մէջ գոյութիւն չունի: Նա թէև տմեն օր քաղաք է գնում, թէև ամեն օր նրա աշքի առաջն են կառքերի ու սայշերի հարթ ու կոկ ուղիները, այնուամենայնիւ գիւղացին իւր գիւղում չի հոգում ճանապարհ բանալու, եղածը հարթելու մասին: Գուցէ ասէք թէ երեսի նա ժամանակ չունի, կամ փողի պէտք կայ, միջոցը չի ներիւ ոչ, նա ժամանակ շատ ունի, վեց ամսից աւելի անգործ ընկած է դոմի օդաներում, նա ծոյլ է և անհոգ, գետնից մի քար անգամ չի ուղում վերցնել թէ և այդ քարին հարիւր անգամ դիսցը ել է ոտքը և ցաւ զգացել: Գիւղի ծուռն ու մուռ ճանապարհներն այնքան քարքարուա են, որ անծանօթ մարդու ոսկորները կը կսառըուին: շարունակ սայլի կամ կառքի անիւները դարկուելով քարերին:

Առ հասարակ մենք սիրում ենք լսել հայի կուլտուրական ազգ լինելու մատին, ես էլ կարծում եմ որ այդ ճշմարիտ է:

Միայն չպէտք է ուրանալ և այս, որ մենք հեշտութեամբ չենք  
ընդունում կենցաղակրթութիւնը: Գուցէ այս էլ հայ մարդու  
ընաւորութիւնից է, կամ շրջապատող հանգամանքների ըեր-  
մունք: Ինձ թւում է թէ այդ երկուսն էլ հաւասար կերպով  
ազգում են մեր առաջադիմութեան վրայէ Բայց մի բան՝ բազ-  
մաթիւ զիազութիւններն ու վորձերը ցայց Են աալիս որ  
մենք շատ շուտ ու հեշտութեամբ իւրացնում ենք օտարների  
բացասական կողմերը, իսկ երբ նրանցից պէտք է սովորել մար-  
դավայել նիստ ու կացը, այն ժամանակ այդ լաւն ու օրինակե-  
լին դանդաղ ու յամառ կերպով է մտնում մեր մէջ: Օրինակ,  
երբ խօսքը շուայլութեան, հարթեցողութեան, ընտանեկան երկ-  
պառակութեան, թագուն մեղքերի մասին է, այսպիսի գէպ-  
քերում հայր կաշխատի յաջողութեամբ մրցել օտարների հետ,  
իսկ երբ պէտք է առաքինի, ազնիւ շիտակ մարդ լինել, այն  
ժամանակ մենք յամառութեամբ կընդունենք այդ յատկութիւն-  
ները: Հազար էլ ներշնչիք հայ զիւզացուն, թէ ընակարանը  
պէտք է լինի չոր, լուսաւոր, օդը մաքուր, թէ պէտք չէ ապ-  
րել անասունների մէջ, նրանց դարշահոտութիւնը չպէտք է  
շնչել, թէ պէտք է վրան-զլուխը մաքուր պահել, զգուշանալ  
վարակիչ հիւանդութիւններից են, միննոյն է, զու ոչինչ չես  
կարող հասկացնել նրան: Նա այդ բոլորի վրայ նայում է ճա-  
կատագրական նշանակութեամբ, և կը շնչէ դարձեալ նոր տունը  
հնի ձեռով, կապը այնպէս, ինչպէս որ ապրել է հայրը, պապը,  
տարբների ընթացքում:

Բայց բնութեան մէջ բոլոր օրգանական կազմ ունեցող-  
ներն անպայման ենթարկում են իրանց միջավայրին: Այսպէս,  
օրինակ, բոյոր կորցնում է իւր գոյնը, երբ մթութեան մէջ է  
պահւում, միջաները ստանում են այն գոյնը, ինչ գոյն որ ու-  
նին նրանց շրջապատող առարկաները: Դման փոփոխութիւն  
անկասկած կը կը նաև մարդք: Հայ զիւզացին դարերի ընթաց-  
քում ապրելով Քաննովնի նկարագրած գետնափոր Խրճիթնե-  
րում, լոյսից զուրկ, շարունակ շնչելով խոնաւ ու գարշահոտ  
օդը, պէտք է որ կարցնէր իւր թարմութիւնը, մարմնի բարե-  
ձեռութիւնը: Բնակարանի մասյլ տեսքը կազդէր նոյն իսկ հոգե-  
կան դրութեան վրայ, և նա կը գառնար կոպիտ, խոտաբարոյ,  
յամառ: Նրա հոգեկան վատ արամագրութիւնը կը մեռցնէր  
նրա մէջ երդելու ցանկութիւնը: Եւ իրաւի, հայ զիւզացին  
աւշքի չե ընկնում առանձին գեղեցկութեամբ, մինչև իսկ տգեղ  
է նա, կորացած, գալիացած, մռայլ ու կնճռոտ: Նա երգելու-  
առանձին ոէր չունի, թէկ բնութիւնը պարզել է նրան լաւ-

ձայն։ Գեղջկուհին ամենելին չի երգում, եթէ նկատի չունենանք հարսանիքների ու տօնական օրերի խմբական «Լէլէները»։

Գուցէ առարկողներ լինեն, թէ ապա ժողովրդական այնքան ստուար երգերն ում արդիւնքն են։ Այդ երգերը մեծ մասամբ անհամաների արդիւնք են, մնացածներն էլ Արարտեան դաշտի ընակիչների յօրինածներ են, որոնց միջավայրն անհամեմատ լաւ է ներակի գիւղացիների միջավայրից։ Կարճ առել, վատ ընակարանում ազրող մարդը կորցնում է երդելու սէրն ու տրամադրութիւնը։ Զէ՞ ո՞ ամպ օրում մարդ հոգեակն թուլանում է, մինչդեռ պարզ ու գեղեցիկ եղանակին մարդն աւելի աշխոյժ՝ աւելի ուրախ է լինում։

Անցեալ դարի սկզբում ամբողջ ներակը ընակեցրած էր թուրքերով։ Քէ գիւղեր կային, որ հայաբնակ էին։ Այդ սակաւաթիւ հայ գիւղերից էին նաև Ղանլիճաները։ Թէ մըքան ընակիչներ են եղել այս գիւղերում մինչև 1828 թիւը, յայտնի չէ։ Միայն ռուս-տաճկական պատերազմից յետոյ այստեղ գաղթեցին գերջանցիներ, տիկորցիներ, ագրակցիներ, կարսեցիներ են։ Ներկայումս Վերին Ղանլիճան ըաղկացած է 130 տանից, ունի 970 երկուու ընակիչներ, 456 արական և 514 իդական։ Եսկ Ներքին Ղանլիճան ունի 64 տուն, 500 երկուու ընակչով, որոնցից 256 արական են և 244-ը իդական։

Յնակիչները զանազան տեղերից եկուո՞ներ լինելով, ունին ընաւորութեան զանազան խառնուրդներ, բայց ընհանրապէս որոշում են որպէս թուրքահայեր, իրանց սովորութիւններով նիստուկացով։ Սահմանին մօտիկ լինելով, երկար տարիներ սերտ յարաբերութիւններ ունեին գրացի թուրքերի հետ։ Մեծի մօտ սուրուկ ու շողոքորիծ են ձեւանում, փոքրի գէմ բռնակալ։ Եթէ ձեզ չեն ճանաչում, եթէ ձեզանից սպասելիքներ չունին, ձեզ հետ կը վարուեն չոր ու ցամոք, մինչև իսկ կոպտութեամբ։ Դուք անծանօթ էք և մանում էք գիւղ և ձեզ առաջին հանդիպողին որ և է բան էք հարցնում, ղանլիճեցին ակամայ կը պատասխանէ ձեր հարցին և ամենեին ձեզ բաւականութիւն շտուած կը հեռանայ ձեր մօտից։ Բայց եթէ գուք մի աստիճանաւոր էք, ճականներիդ կոկարդ ունիք, այս գէպքում գիւղացին ձեզ կընդունէ յարդանքով, սիրով ձեզ կը լուէ և միշտ կաշխատէ գոհացում տալ ձեր հարցերին։ Ոի կառը ցամաք հայ կը խնայէ անծանօթ հայ մարդու համար, բայց ձուածեղով կը պատուէ օտարին։ Ղանլիճեցոց մէջ հատ-հատկութիւ է գոնել առաքինի մարդիկ, բայց քէւ չեն հարբեցողներ, սրիկաններ։ Ֆին սերունդն աւելի վատ էք, քան թէ նորը։

Մինչեւ ռուս-տաճկական պատերազմը՝ նրանք մաքսանենգուշ թեամբ էին պարագում։ Այժմ ուրիշ նենդութիւնն են անում և Աղքարայ լեռների հայ և թուրք եալաւորներից մեծ քանակութեամբ եւդ ու պանիթ են ըերում քաղաք ծախում։ Նրանց ձեռքն ընկած իւզն առանց խարդախնելու (ֆալսիֆեկացիա) չել լինում։ Եթէ դուք զանլիճեցիներից եք գնել իւզը, անպայման համոզուած եղէք, որ կեզծած կը լինի։ Նրանք իրար հետ էլ հաշտ չեն. կուին ու խովութիւնը անպակաս է նրանց մէջ, մանաւանդ ներքին դանլիճեցիների մէջ։ Խովութեան դլխաւոր պատճառը հողի սակաւութիւնը և անհաւասարութիւնն է։

## 2.

Կառավարութիւնը Վերին Ղանլիճային յատկացրել է 1052 դեսեատին հողային տարածութիւն, որից մշակելի է միայն 600 դեսեատինը և տանում է 3440 կոտ սերմացու, իւրաքանչիւր անձին ընկնում է  $3\frac{1}{2}$  կոտատեղ։ Ներքին Ղանլիճան ունի 856 դեսեատին հոդ, որից մշակելի է 416 դեսեատինը։ Այդ հողը տանում է 1664 կոտ սերմացու, որ գարձեալ իւրաքանչիւր անձին հասնում է  $3\frac{1}{3}$  կոտատեղ։ Հողն ինքն ըստ ինքեան պակաս է, հաշուելով որ ըերքը տալիս է մէկին հինգ, կը լինի 18 կոտ, որ պիտի քաւականացնէ մէկ մարդուն ամբողջ տարի։ 18 կոտը մօտաւորապէս կանէ 21 փութ կամ 840 գր. բաժանելով 365-ի վրայ, կստանանք  $2\frac{1}{2}$  գր. օրական ուտելիք։ Բայց մեր գիւղացին տարուայ մէջ օրերն ըստ մեծի մասամբ անցնում է ցամաք հացով։ Օրական  $2\frac{1}{2}$  գրուանքայ հացը նրան բաւարար սնունդ չի կարող նկատուել, ուստի նա պէտք է երկրագործութիւնից ջոկ կողմնակի աշխատանքով ճարէ իւր ապրուստը։ Հողը բաւական չէ, հասկանալի է նաև գոյութեան անողօք կուիը։ Ահա 20 տարի կը լինի, որ նրանք կոււում են անհաւասար հողաբաժանութեան պատճառով։ Զքիուածները մեծ լիով են ծախում, հաւատարմատարներ են վարձում, որ իրանց խնդիրը, բողոքը տեղ հասցնեն, որ մի հնարքով հողը հաւատարացնուի միայն սովորաբար զօրեղ կողմը միշտ յաջթում է։

Մեր գիւղացին խաւար է, տգէտ։ Նա միայն իւր դրացու հետ կուուել գիտէ, բայց մտածել, աշխատել, յոգնած ու ակաւ հողն աւելի արդիւնաւոր դարձնել, չի իմանում։ Նա չը գիտէ ու նւրսպայում ազգաբնակութիւնն անհամեմատ խիտ է մերից,

հողը չափազանց սակաւ, այնպէս որ մերի համեմատութեամբ այնտեղ մարդիկ քաղցած պէտք է կոտորուէին, բայց խոկապէս ի՞նչ ենք տեսնում: Նրանք շատ զգալի կերպով են աճում ոնունդի առատութիւնից: Գաղտնիքը նրանումն է, որ նրանք գիտեն հողը պարարտացնել, յոգնած հողն անդամ արդիւնաւոր են դարձնում, ցանելով նրա մէջ բոլորովին այլ սերմեր: Մէկ դեռեալին հողում նա ցանում է երեք տեսակ սերմացու և ամեն տարի փոխում է նրանց տեղը: Բայց գլխաւոր նրան օդնողը, հողի պարարտացնելն է: Գիւղերում աթարի անմիտ բուրգերն են աչքի ընկնում: Ճիշտ է, մեր անփայտ գաւառում աթարը վառելիքի տեղ է ծառայում, բայց նա գործածելու համար շատ-շատ է, պէտք է փթի ու ոչնչանայ: Փոխանակ նրա վրայ զուր տեղը չարչարուելու, աւելի նպատակայարմար կը լինէր մի մասը կրել արտերը և նրանով հողը պարարտացնել:

Լուրեր են պտտում գիւղացոց մէջ, որ իրը թէ կառավարութիւնը մտադիր է հանել գիւղացիներին այս գիւղերից: Արանց հողերի վրայ զօրանոցներ պէտք է շինուեին, ինչպէս Եասաղուլի հողերի վրայ, որ յայտնի է ներկայումս «Պալիգոն» անունով: Ծանր է, խօսք չկայ, մարել հայրենի օջախը, տւերել անց ընակավայրը, թողնել սիրած սարն ու ձորը, պապերի պաշտամ վանքերը, նրանց նույրական գերեզմանները և գաղթել նոր տեղեր, բայց ծայրայեղ կարիքն ստիպում է նրանց այդպէս վարուել, նոր ընդարձակ հողեր ձեռք բերելու յուսով: Նրանց համար հողը նոյնքան սիրելի է, որուն և հայրենի օջախը, հողի հետ նրանք կապուած են պապենական աւանդութիւններով և իրանց չարքաշ ներկայով:

Գիւղացին գիւղացի չէ, եթէ հող չունի, բայց գիւղացի լինել առանց անասունների նոյնքան անհասկանալի է: Մեր սակաւածող գիւղերում շատ կան գիւղացիներ, որոնք հողեց էլ են զուրկ, անասուններից էլ: այդպիսի գիւղացիներ կան և այս երկու գիւղերում: Արօտատեղերի պակասութեան համար Դանլիճնաներում անասնապահութիւնը չնչին տեղ է ըռնում: Ուշ նեցած սակաւաթիւ անասունները կերակրելու համար արքունի հողերից ամարանոցներ են վերցնում առանձին վճարով, առաջին գիւղը ամարանոցին վճարում է 41 ր. 60 կ. իսկ երկրորդը՝ 57 ր. 20 կ: Վերին Դանլիճան ունի 927 մեծ և 400 մանր անասուններ, իսկ երկրորդը՝ 434 մեծ և 773 մանր անասուններ, որ ընակիչների թուի հետ համեմատելով, շատ քիչ է:

1901 թուից սկսած մինչեւ օրս եղջերաւոր անասունների ժամանակաշրջանը մի տեսակ պատուհաս է դարձել լեռնա գիւղացու

համար, թէ Արևելին և թէ Արևմտեան Շիքակում։ Համարեա խոշոր անասունները մեծ մասամբ կոտորուեցին նղովուած ժանտախտից։ Գիւղականը զրկուեց իւր տան նեցուկներից, չծկան եղից, երեխաններին կերակրող կովից։ Հենց Վերին Դան Միճայում յիշեալ թուեն կոտորուել են 257 անասուններ կառավարութիւնը չնայելով որ վճարում է կոտորուած կենդանիների փոխարէնում։ Կառավարութեան նշանակած գնելով սպանուած մէկ կովն արժէ 15—20 բուբլի, մէկ եղը՝ 20—40 բ։ Երկու տարեկան հորթը արժէ 8 բուբլի։ Խոկ մէկ տարեկանը՝ 2—4 բուբլի։ Համարեա բոլոր գիւղերումն էլ, որտեղ ժանտախտ է երևացել գիւղացիներն դժոհն են բժիշկներից։ Նրանց ասելով, բժշկները կամայականութիւնով կոտորում էն անասուններին և յաճախ անվճար թողնում, իբր այն պատճառով, որ գիւղացիները համարձակուել են հիւանդութիւնը գաղել։ Այսպիսի պատճառաբանութիւններով Վերին Դանիճայում սպանուել են 32 կենդանի գիւղում, իսկ ամարանոցում 14 հատ։

Գիւղացիները, բժշկների եռանդը անասուններին կոտուելու գործում, բացարում են նրանով, որ ուա իւրաքանչիւր սպանած կենդանու համար վարձ է ստանում 3 բուբլի։ ուշըմն որքան շատ կոպանի, այնքան վարձ կը սահնայ։ Մի կը թուած մարդուց այդպիսի վարմունք անոպասելի է, ես տրամադրուած եմ կարծելու, որ գիւղացիք իրանց անասունների կոկից զայրացած են բժշկի դէմ, եթէ ոչ, ի՞նչպէս թոյլ կը տար նա տմարդի կերպով կոտորել խեղճ կենդանիներին, մասնաւանդ որ զրանով կը զրկէր գիւղացուն ապօռուատի միակ յոյսից։ Ասում եմ, որ կատկածում եմ գիւղացոց առածների վրայ, բայց եթէ ճիշտ է, շատ ցաւալի է։

Գիւղացին տգէտ է, դրա համար էլ կոպիտ է, նա հեշտութեամբ կարող է զայրացնել պաշտօնական մարդկանց, մասնաւանդ բժիշկներին այդ տեսակ պաշտօնում։ Բայց որանց սիրելի չէ իրանց զայրոյթը թափել խեղճ կենդանիների վրայ, զկելով աիրոջը աշխատող կերակրող ոյժից։

## 3.

Վերեռում մենք արգէն տեսանք, թէ հողն այժմեան պայմաններում ի՞նչ չափով կարող է կերակրել գիւղացիներին, տեսանք նաև անառունների քանակութիւնը, որ պէտք է նրանց ժառայէ գիւղատնտեսութեան մէջ, այժմ տեսնենք գիւղական

ծախքերը, որով լսացըած կը լինենք մեր հետաքրքրութիւնը: Վերին Դանլիճան արքունի հողերից օգտուելու համար գանձառանին տարեկան տալիս է 806 բուրլի: տեղական վարչական ծախտերին՝ 459 ր. 42 կ. հողաչափին՝ 58 ր. 20 կ. գիւղական գատարանին՝ 52 ր. 43 կ. գիւղի պահողոդին՝ 90 ր. ամարտնոցի պահողոդին՝ 50 ր. արտերի պահապանին՝ 50 ր. գզըին՝ 25 ր. բէդարի՝ 150 ր. ամարանոցին՝ 42 ր. 10 կ. բոլորը միասին կանէ 1783 ր. 15 կ. Այս հաշուվ իւրաքանչիւր անհատին ընկնում է մօտաւորապէս 2 ր. տուրք:

Ներքին Վանլիճան հողից օգտուելու հարկ գանձարանին տալիս է 455 ր. տեղային վարչական ծախտերին՝ 259 ր. 65 կ. հողաչափի՝ 27 ր. 12 կ. գատարանին՝ 47 ր. 84 կ. գիւղի պահողոդին՝ 90 ր. ամարանոցի պահողոդին՝ 15 ր. արտերը հոկոզին՝ 21 ր. բէդար 44 ր. արօտատեղու վճար՝ 57 ր. 20 կ. ընդամենը՝ 1016 ր. 51 կ. Դարձեալ իւրաքանչիւրին հասնում է 2 ր. տուրք: Ըսթերցողը տեսնում է, որ հաշիւներից դուրս են մնում հողերը տուրքերը: Այժմ անցնենք եկեղեցական խընդիրներին:

Վերին Վանլիճան ունի մի եկեղեցի, որ նորոգուած է 1858 թուն. եկեղեցին կոչւում է ո. Առտուածածին. փայտածածի է և բաւական լուսաւոր: Եկեղեցին հող կամ այգի չունի և պահւում է ֆողովրդի կամաւոր տուրքերով: Տարուայ ընթացքում գանազան ազբեւրներից հազիւ թէ 52 բուրլի է գոյանում, հէնց այդքան էլ ծախտ է լինում, ինկի մոմի մատեանների գին են. Գիւղի քահանան մէկ հատ է և հազիւ մի քանի տարուայ ձեռնադրուած: Ես ուզեցի ծանօթանալ դիւղական քահանայի արդեւնքների հետ և ահա զնում եմ այստեղ: Թէկ օրէնքով քահանային տրւում է համփաշարէքի հող, բայց շատ գիւղերում հողի սակաւութեան պատճառով քահանան զրկուած է լինում հողից: Քահանայի երկրորդ գլխաւոր արդեւնքը «պտղի» կոչուած տուրքն է, որ դարձեալ զսնազան պատճառներով քահանան շատ անդամ չի ստանում: Այս գիւղում նրան տալիս են 4 սոմառ պտղի, կէսը ցորեն, մնացածը գարի (34 փ. ցորեն 30 փութ գարի): Կատարուած ծիսակատարութիւններից—մկրտութեանը նշանակուած է 40 կ. որից 20 կոպէկը կնքահայրն է տալիս, ննջեցեալին (մինչեւ պսակուելը փոքը է համարուել) 20 կ. մեծ ննջեցեալին՝ 1 ր. 2 բուրլի: Եօթին՝ 1 ր. 40 կ. պսակի յայտարարութիւն տալիս ստանում է 2 ր. նշան օրհնուեթեան 56—60 կ. պսակի ծագման՝ 20—50 կ. ննջեցեալի պատարագի գարձ 20 կ. տնօրհնէքին՝ 2—3 ր.

իւրաքանչեւը գերեզման օքնէքին՝ 2—3—5 կ., մատազ օքնէքին՝ 15—20 կ. 0.5 և չորս տարուայ ընթացքում կատարուած ժխոակատավութիւնները, որոնք մի և նոյն ժամանակ ցոյց կամ գիւղերի ազգաբնակութեան շարժումը:

130 ՏԱՐԵ—970 ԲՆԱԿԻՀ.

64 ՏԱՐԵ—500 ԲՆԱԿԻՀ.

Տարի- ներ.	Պատկ.	Մկրտու- թիւն		Նեցե- ցեալ		Ներփական Պատկ.	Պատկ.	Մկրտու- թիւն		Նեցե- ցեալ	
		Արակ.	Իզուկ.	Արակ.	Իզուկ.			Արակ.	Իզուկ.	Արակ.	Իզուկ.
1898	5	24	17	38	13	1898	»	8	9	6	4
1899	17	19	26	14	20	1899	4	10	»	5	4
1900	17	18	24	14	17	1900	7	8	12	4	1
1901	6	26	26	13	11	1901	»	11	12	6	2

## 4.

Ոյցելել Ղանլիճաները և քր լսել Տէր-Եղիայի անունը, այդ անկարելի է: Խրանք գիւղականները ձեզ կը տանեն Վերին-Ղանլիճայի եկեղեցու մօտ և ցոյց կը տան մի անշուք շխսեմ, ու կառեն, թէ այս է Տէր-Եղիայի գերեզմանը: Ո՞վ էք Տէր-Եղիան: Սա գիւղի հանրածանօթ քահանան էք, յայտնի իւր կրօնական գիտութեամբ և քաջ հայագէտ: Նա ծնուել է 1813 թուին Մշու Բուլանդ գաւառում: Հայրը քահանայ էք՝ Յարութիւն քահանայ Յովհաննիսեան: Կարնի գաղթականութեան ժամանակ իւր ընտանիքով տեղափոխուեց Ալէքսանդրապոլ և քահանայագործութիւն էք անում Ղանլիճայում: Մանուկ նղիան ծաղիկ հիւանդութիւնից մի աշքը կոռցնեց, բայց այդ չէք արև գելում նրան կարդալ սովորել և սպասաւորել եկեղեցու մէջ: Դեռ փոքր հասակում ցոյց էք աալս կարգալու ընդունակութիւն, որին նպաստում էք սուր յիշողութիւնը: Հայրն զգաց, որ իւր ունեցած գիտութիւնով չի կարող որդու ուտման ժամանք յագեցնել, բերեց քաղաք, յանձնեց վարժապետ Յովհան քահանայ Տէր-Մարտիրոսեանին: Այն ժամանակուայ Խալֆայական գպրոցների ուսումը միայն կարգալու մէջն էք կայանում, իսկ ուսման բարձրագոյն գաործնթացը ամփոփուում էք քերականութեան, ճարտասանութեան, տրամադանութեան և առ-

տուածաբանութեան մէջ։ Առ ժամանակ մնալով վարժապետ Տէր-Յօվհաննիսի մօտ պատանի Եղիան, բաւական առաջ դնաց և այնուհետեւ աւելի չկարողանալով օգտուել իւր վարժապետից, դնաց կաթոլիկ Աղէքսանդր վարդապետ Արարատեանի մօտ, որ այն ժամանակ յայտնի էր ուսպէս լեզուագէտ, բանառտեղծ և աստուածաբան։

Նատ մնաց նա իւր նոր ուսուցչի մօտ թէ քիչ, յայտնի է։ Հաւանական է, որ այստեղ էլ աւարտեց իւր ուսումը, այնպէս որ յետոյ վարդապետն իւր աշակերտի մասին խօսելով, գովում էր նրան ասելով—Տէր-Եղիան ինձանից անցաւ։ Առուանի ուսուցչի միայսութիւնը ցոյց է տալիս, որ աշակերտը ընական ընդունակութիւնով և ընթերցասիրութեամբ շատ է առաջ դնացել։ 1848 թուին, գրուած է նրա ցուցակ ծառայութեան մէջ, դարձել է քահանայ։ Նրա քահանայանալու մասին ժամանակակիցներն այսպէս են պատմում։

Տիրացու Եղիային շատերն են աշակերտել, որոնցից մէկն է Եղել Երջանկայիշատակ Ներսէս Ե-ի սիրելի սարկաւագ Բէրոյեանը։ Երախտագէտ աշակերտը ուսուցչի մարմնական պակասութիւնն առ ոչինչ համարելով՝ ուզեցել է օգնել նրա ձեռնադրուելուն։ Նրան յաջողուել է ձեռնադրութեան հրաման գուրս ընթել։ Դուկաս արքեպիսկոպոսը գանգատւում է Ներսէսին, որ Բերոյեանցը կոյր տիրացուից կաշառք առնելով, ձեռնադրել է տալիս։ Հայրապետը զայրանում է Բերոյեանցի դէմ, բայց ուս հասկացնում է նրան, թէ ձեռնադրուղն ինչպիսի արժանիքի տէր է։ Ոյդ միջոցին պէտք է ձեռնադրուեին 36 քահանայացուներ։

Կաթողիկոսը Բերոյեանցից լսելով տիրացուի մասին հրամայում է հետեւեալ օրը բոլոր տիրացուներին իւր մօտ կանչել, որ ինքն անձամբ ստուգէ նրանց գիտութիւնը։ Գալիս են սինողականները. բերում են նաև տիրացուներին։ Ներսէսը նրանց հարցաքննում է։ ոչ մէկը չի կարողանում գոհացնել նրան։ Ամենից վերջը հարցաքննում է միականի տիրացուին։ Սա իւր տուած պատասխաններով զարմացնում է ունկնդիրներին։ Այն ժամանակ Հայրապետը դառնալով Դուկաս արքեպիսկոպոսին՝ ասում է։—Սրբազնն, այս տիրացուի մարմնի աչքը կոյր է, բայց մտքի աչքը բաց։ Երանի՛ քո տիրացուները երկու աչքերով էլ կոյր լինէին, բայց որա պէս հմուտ, տարէք, ձեռնադրեցէք սրան։

60-ակուն թուերի սկզբներում բողոքականութիւնը մուտք գործեց Ալէքսանդրապոլում և գիւղերում։ Երբորդ Արքավալի

գիւղն էլ խմորուեց այս աղանդով։ Ամբողջ գաւառում, քացի Տէր Եղիայից, ուրիշ մէկը չկար, որ նրանց քարոզէր։ Հոգեւոր Եշխանութիւնը սրան էլ նշանակեց քարոզիչ։ Կարճ միջոցում Տէր Եղիան կարսղացաւ համոզել նրանց և վերտարձնել մայրենի եկեղեցու գիրկը։ Նրա քարոզութեան մեթողը նրանումն էր կայանում, որ նախ խօսեցնում էր հակառակորդին, և ապա մեզմ ու հանդարտ կերպով վկայութեան կարկուտ թափելով, պինաթափ էր անում ընդդիմախօսին։

72 Թուին այրուեց Սամաթիայի Եկեղեցին։ Այս առիթով Ներսէս Վարժապետեան Սոի Եպիսկոպոսը եկաւ ոռուսահայաստան նպաստ հանգանակելու։ Ալէքսանդրապօլի վրայով նա անցաւ ս. Էջմիածին Մայր Աթոռին հաւատարմութեան երդում տալու։ Ալէքսանդրապօլում նա իջևանեց Մկրտիչ աղա Բաբայեանի ատանք Պատմում են, որ սրբազնը ցանկացել էր քաղաքի քահանմաց քահանաների հետ խօսել։ Տան տէրը կանչում է երկու քահանայ։ Սրբազնը խօսում է նրանց հետ։ Քահանաների հեռանալուց յետոյ, տան տէրը հարցնում է։

— Սրբազնն, ի՞նչպէս գտար մեր քահանաներին։

— Դրանք գատարկ մարդեկ են, ուրիշ աւելի լաւը չկայ։

Տան տէրը կանչել է տալիս Տէր Եղիային։ Ներսէս Վարժապետեանը երկար ժամանակ քաւականութեամբ սկսում է զրուցել նրա հետ։ Երբ որ Տէր Եղիան հեռանում է այնտեղից, սրբազնը նկատում է տան տիրոջը։

— Այս ի՞նչպէս քաղաք է, այդ քահանայի նման գիտունին գիւղում ի՞նչու էր թողել, չէք կարող նրան քաղաք բերել, դպրոցում գտաստու կարգել։ Նա ամբողջ Առառածաշունչը գոց գիտէ։

Եւ իրաւի, Տէր Եղիան շարունակ ս. Գիրք էր կարդում։ Նա շատ անգամ ծայրէ ծայր կարդացել էր այդ դիրքը։

Ներսէս Վարժապետեանը պատրիարքութեան ժամանակ Մոեր մագիստրոսին առած է լինում։ Վարժապետ, Նիրակում ես մի քահանայ տեսայ, որ հմուտ աստուածաբան է և կարող է քեզ հետ մրցել։ Մոեր մագիստրոսը Ռուսաստան գալիս, այցելում է նաև Ալէքսանդրապօլ՝ տեսնելու այդ գովուած աստուածաբանին։ Նա հանդիպում է Մովսէս քահանայ Երեմեանցին և ինդքում է ցոյց տալ իրան Տէր Եղիային։ Նրանք միասին գնում են գիւղ։ Կալոցին է լինում։

— Գիւղ հասնելով, պատմում է ուղեկից քահանան, — մեր գէմն ելաւ Տէր Եղիայի որդիին՝ Քոչարը։ Վարժապետ, ասացի նրան, — ահա՛ քահանայի որդիին։

—Մագիստրոսը կարծում է թէ ուղեկեցը հանար է անում իւր հետ. նեղացած՝ ասում է:

—Ո՞յ մարդ, զիս կը ծաղքե՞ս. ի՞նչպէս կարելի է, որ անուանի քահանայի որդին այսպէս ցնցոտիներ հագած լինի:

—Ոչ, վարժապե՞տ, ես չեմ ծաղրում, ճիշտ եմ ասում, սա իսկ Տէր Եղիայի որդին է:

Ոյդ միջոցին, որտեղից որ էր, մեր առաջ կանգնեց Տէր Եղիան: Նա կարճահասակ էր, լայն թիկունքով, երկար սպիտակ մարտոքով. հագին ունէր կտակոյտ կտաւից կարճ բանկոնակ, և նոյնպէս սպիտակ կտաւից վաշտիկ: Ես ցոյց առուի վարժապետին իւր ցանկացած մարդուն և ասացի, որ վայր իջնի ձիուց Նա Երբէք չէր ուզում հաւատալ աչքերին, թէ այդ հասարակ, գեղջուկ շարերի մէջ ծածկուած մարդը կը լինի Վարժապետեանի գովածը:

—Ո՞չ, զու տէր բարեա, կատակ կընես ինձ հետ: Տէր Եղիան հասկացաւ բանի ինչ լինելը, հանգարա կերպով ձեռքով արեց ու ասաց.

—Համեցէք, պարո՞ն, զուք դատում էք մարդուն արտաքինով, մինչդեռ պէտք է ներքինը տեսնել:

—Մենք ցած եկանք ձիերից, հանգոտացանք: Քաղաքից հետներս առատ ուտելեղին էինք վերցրել, կերանք վերջացրինք և նրանք երկար շատ երկար սկսեցին խօսել կրօնական շատ խնդիրների մասին: Մինչև երեկոյ մնացինք գիւղում: Վերադարձին հարցրի նրան:

—Վարժապետ, ի՞նչպէս տեսաք Տէր Եղիային: Ճշմարիտ ու դովասանքի արժանի է եղել, սա հմուտ աստուածաբան է:

Ներուկում ամէնքը նրան աստուածաբան էին ճանաչում, բայց նա հեզ էր, խօնակի, երբէք այդ տիտղոսը չէր գործածում: Նրան հարցնելիս են եղել, ի՞նչու աստուածաբան չես գրում: Նա պատասխանում էր թէ ես ով եմ, որ դպրոցն եմ աւարտել, որ այդ տիտղոսը կը եմ:

Տէր Եղիային աշակերտել էր Աղ-Քելլիսեցի Տէր Մանուկը, բայց սա ամբարեամբարար շուտ վախճանուեց:

Տէր Եղիան մինչև կեանքի վերջը մնաց գիւղում: Հնայելով 77 տարեկան հասակին՝ դեռ առողջ էր և առողջ: Նա մեռ 1890 թուի մայիսի 7-ին, կարճառե հիւանդութիւնից յետոյ:

5.

## ՆԵՐՖԻԾ ՂԱՆԻՒՆԱՅԻ ՎՄԵՒԵՐԸ.

Հայ ժողովուրդը քրիստոնէութիւն ընդունած օրեց ակած, առանձին սէր է ցոյց տուել գէպի եկեղեցին։ Թադաւորների և իշխանների առատաձեռնութիւնով կանգնեցնում էին եկեղեցիներ և վանքեր, մէկը միւսից շքեզ, մէկը միւսից հայակապ։ Հէց այդ վանքերի մնացորդներն են, որ այսօր կենդանի վկաց են անցեալ փառ աւոր օրերի, իրանց կառուցազների մէջագործութեան։ Այդպիսի կանգուն և կիսականդուն վանքերով լեռն է Արևելեան և Արևմտեան նիբակը, աշքայական Անի քաղաքով։ Վանքերի մեծադոյն մասը հսկարականների ձեռքով ին շինուած, միայն քայլը իշխանների ձեռատկերտներն են։ Վերջին տեսակի վանքերը, կաելով իրանց վրայ պատմական խոշոր զէմքերի անուններ, կրկնակի նշանակութիւն ունին մեզ համար։ Այդ տեսակ վանքերից են, Անիի մայք եկեղեցին (980 թ.), որ հիմնել է Ամբատ Բ. թագաւորը և աւարտել է նրա հարու կատարմեղէ թագուհին (1001 թ.)։ Ա. Փըկէչ եկեղեցին (1035 թ.) շինել է Ապուղամբենց Ապղարակ մարզպանը, Ապուղամբենց ու Գրիգոր Եկեղեցին (996/7 թ.—1000 թ.) Պահլաւունի իշխանների շէնք է։ Հուռմոսի ու Ցովհաննիսի վանքը (1038 թ.) ժամատան հետ շինել է Յովհաննէս Շահնշահը, Կուղլինու (Քաղնայք) ու Աստուածածին Եկեղեցին (1010 թ.) շինել է Պահլաւունի Վահրամ իշխանը, Հառիճու ու Գրիգորի վանքը (975 թ.) շինուած է ճոն Սարգսից և վերջապէս Վանինու (Մարմաշէն) վանքը (975 թ.) դարձեալ Պահլաւունի Վահրամ իշխանի շինածն է։ Եռ շինուեցի Նիրակում եղած միւս վանքերը, որոնք դարձեալ մերեալ վանքերի շինութեանց ժամանակներումն են շինուել կամ նորոգուել։ Իմ ցանկութիւնու էր միայն ցոյց տալ թէ ի՞նչպէս 10-րդ դարում հոգևորական կամ աշխարհական՝ աշխատում էին բարձրացնել վանքերը։ 10-րդ դարում Ռամանոս կայսրը հալածանք հանեց իւր հպատակ հայերի դէմ, որսինետե նրանք յոյների հետ դաւանութեամբ միանալ շէին յօժարում, այդ հալածանքի պատճառով շատ կրօնաւորներ փախան Հայաստան։ Անու թագաւորները և Հայոց կաթողիկոսները ընդունելով նրանց, թոյլ տուին իրանց իշխանութեան սահմաններում ընակուելու։ Այդ կրօնաւորներն և պատճառ եղան միքանի վանքերի վերանորոգութեան և քարդաւաճմանը։

Պահլաւունի իշխանների կառուցած եկեղեցիները երեք են,

դրսից կամարագարդ ու դմբէթաւոր և շինուած են ամբողջապէս կարմիր քարերով։ Նրանցից միջինը մեծ է, իսկ երկու կողքերինը փոքր։ Մեծը շինուած է անսիւն և հնումը կոչւում էր Մարմաշէն \*), այժմ կոչւում է ո. Ստեփաննոս։ Ա. Ստեփիաննոսի երկարութիւնը 17 արշին է բեմի առաջից մինչև դռուը, լայնութիւնը՝  $14 \frac{1}{2}$  արշին, իսկ սեղանի խորշը՝ 7 արշին է։ Եկեղեցին կանդամած է վեց որմնասիւների վրայ, որոնցից երկուոր կամար կազմելով՝ ձեւացնում են սեղանի խորշը։ Պատարագի սեղանը մէկ հատ է և գտնուում է այդ երկու որմնասիւների տակ։ Խաչկալի յետեւ, կիսաբոլորակ պատի վրայ, կան 7 կամարաւոր սիւնագարդ պատուհաններ, որոնց գլուխը մոզայիք քարերով ծաղկեայ շրջան են ձեւացնում։ Եկեղեցին աջ և ձախ կողմերում ունի երկու խորաններ, որոնց գլուխը բացւում են սեղանից ցած և իջնում են աստիճաններով, որովհետեւ արևելեան երկու որմնասիւնները փակել են խորանների մուտքը առաջից, իսկ գլուխը բաժանուած են որմնասիւններից։ Սիւները բարձրում կազմում են սեղ կամարներ, որոնց գլուխը միացման կետում ունի քառակուսի փոքրիկ դռնակներ, որոնց մէջ բացւում են խորանների վերնայարկը, որտեղից դուրս է գալիս եկեղեցու տանիքը։ Եկեղեցու չորս որմնասիւնները կազմում են հնդական անկիւնախորշը և կրկնակամարներ, որոնց վրայ հաստատուած է շքեղ դմբէթը չորս լուսամուտներով։

Որեմտեան պատի վրայ կան երկու ուրիշ փոքր որմնասներ, որանց կամարն աւելի ցած է դրացի չորս կամարներից, որի պատճառով լայնանում է ժողովրդի վերջին շարքը։ Եկեղեցին միայն մի դուռն ունի արեմտեան կողմում, ունի երեք լուսամուտ, մէկը սեղանի վրայ, երկուսն էլ հարաւային և հիւսիսային պատերի մէջ։ Կաթուղիկէն դրսից շատ գեղեցիկ է և սիւնագարդ։ Լուսամուտների գլուխն անկիւնաւոր է և կամարակապ։ Նման կամարներ կան եկեղեցու շուրջը, բոլորն էլ նկարներով քանդակուած։ Եկեղեցու մէջ հիւսիսային և հարաւային կողմը՝ որմնասիւնների բարձրութեամբ խորաններ կան

\*.) Ունանի Մարմաշէն անունն աղաւաղինով, անուանում էն Մարմարաշին, իր մարմարից շինուած։ Այս հերադրուրինը անհինն է, որովհետեւ եկեղեցու քերուրը և քերուրը գոնք մէկ յար լիս մարմարից, այն իսկ շրջակային լիս մարմարինը հանի։ Ուստի պէս է կարծել, որ այդ անունը վերանորոգողի կամ հիմնաղրի անունն է եղել, կամ մի այլ սրբանուն։

գեղեցիկ կամարակապ. իսկ տանեքը եղերը մանրածաղիկ  
նկարներ են:

Ազեմտեան դռան առաջ, ութանկիւնի միապաղաղ չորս  
սիւների վրայ շինուած է եղել ժամաառւնը, որից այժմ  
տեսնուում են ներքնախարիսխներն ու սիւնների ըեկոները.  
Երեւում են նոյնպէս եկեղեցու առաջ որմնասները:

Եկեղեցու դռան երկու կողմք կան տապանաքարեր, որոնց  
ցից հիւսիսային կողմի արձանագիրը վկայում է, որ Վահրամ  
Եշիանի գերեզմանն է և Նրա մօտ 196 տարի յետոյ թաղուած  
է 1225 թուին Եկեղեցին վերանորոգող Գրիգոր արքեպիսկոպոսի  
եղբայր Ղարիբ Մագիստրոսը։ Տապանաքարերից մի քանիսի  
վրայ կարգացւում են.

—Այս է հանգիստ Ապուղամբի որդի Մագիստրոսի, որը  
երեկ Գրեգոր արքեպիսկոպոսի հայրն է. Մէկ ուրիշը.—Այս է  
հանգիստ Դաւիս, որդւոյ Ապուղամբի, եռևի նրա եղբայրն է,  
եկեղեցու յետեւ կայ մի մեծ գելեզմանատուն, որտեղ աշքի  
է ընկնում եռանկիւնի ձեռլ մի մեծ քար, մէջաեղից կոտըուած,  
որի արձանագրութիւնը վկայում է, որ քարը Վահրամի կնոջն  
է.—Այս է հանգիստ Սովիտ աղախնոյ Քրիստոսի, կնոջ Վահ-  
րամայ իշխանաց իշխանին, գստեր Տիգրանայ Հայոց Մարզպանի  
տետոն Անձեւացեաց մէծին Վասպուրականի կիսօթեայ առ Աս-  
տուած Փոլսեցայ և թաղեցայ թողեալ զաւակս իմ տրտում,  
աղաչեմ յեշեսնիք զիս և Աստուած ձեզ ողորմեսցի. ի նիդո-  
թուին:

(Տարու նակելի)